

## ՈՒՂԵՑՈՒՅՑ

### «Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ԲԱՆՔԵՐ» ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ

#### 1. Գիտական հոդվածին ներկայացվող պահանջները

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետև՝ ԲՊՀ) «Բանբեր» գիտական պարբերականում (այսուհետև՝ «Բանբեր») հրատարակության են ընդունվում գիտական հոդվածներ (այսուհետև՝ Հոդված), որոնք համապատասխանում են պարբերականի մասնագիտական ուղղվածությանը («Լեզվաբանություն և բանասիրություն», «Մանկավարժություն և հասարակական գիտություններ»), պարունակում են գիտական նորույթ և արդիականություն: Ժողովածուն հրատարակվում է տարեկան չորս համար՝ տպագիր և էլեկտրոնային ձևաչափերով:

Գիտական աստիճան չունեցող հեղինակ(ներ)ը պարբերականի խմբագրական-հրատարակչական խորհրդին (այսուհետև՝ խորհուրդ) են ներկայացնում գիտական ղեկավարի (կամ գիտական աստիճան ունեցող տվյալ ոլորտի մասնագետի) կարծիքը և համապատասխան ամբիոնի երաշխավորությունը:

Հոդվածը ներկայացնելուց առաջ հեղինակ(ներ)ը պարտավոր են **ծանոթանալ պարբերականի հրատարակչական բարեվարքության կանոններին:**

Հոդվածի բնագիրը, դիմումը և տեղեկացման թերթիկը լրացված ու ստորագրված ուղարկվում են «Բանբերի» [bsu.sciencedep@gmail.com](mailto:bsu.sciencedep@gmail.com) էլեկտրոնային հասցեին:

#### 2. Հոդվածի ձևավորման սկզբունքները և կառուցվածքը

Հոդվածը կարող է ներկայացվել հայերեն, ռուսերեն, անգլերեն, առանձին դեպքերում նաև այլ լեզվով: Հոդվածի հեղինակ(ներ)ի անուն ազգանուն(ներ)ը, վերնագիրը, տրվում են 10 pt տառաչափով, գլխատառերով և թավ (bold):

Հոդվածի վերնագիրը պետք է ծավալուն չլինի (առավելագույն 10 բառ) և արտացոլի հոդվածի բուն բովանդակությունը:

Յուրաքանչյուր հոդված հրատարակվում է համապատասխան **ՀՏԴ**-ով (համընդհանուր տասնորդական դասակարգման կոդ) և **DOI**-ով (թվային նույնականացման համարանիշ):

Հոդվածը պետք է բաղկացած լինի առանձին բաժիններից՝ համապատասխան ենթագրերով՝

### **Համառոտագիր (Abstract)**

Համառոտագիրը ինքնուրույն տեքստ է և պետք է արտացոլի հոդվածի առանցքային բովանդակությունը, որում վերնագրի ուղղակի կրկնօրինակումը և հոդվածի տեքստային հատվածների մեջբերումներն անընդունելի են: Համառոտագրում 150-ից 250 բառի սահմանում հակիրճ ներկայացվում են հետազոտության առանցքային դրույթները և հիմնական արդյունք(ներ): Համառոտագրում չպետք է լինեն հղումներ, իսկ հապավումները պետք է բացված լինեն:

### **Հիմնաբառեր (Keywords)**

Հիմնաբառերը պետք է առանձնացվեն ստորակետերով (5-7 բառ, բառակապակցության դեպքում առավելագույնը 3 բառ): Նախադասություններ չեն թույլատրվում: Հարկ է խուսափել չակերտներից, փակագծերից և այլ նշաններից:

### **Ներածություն (Introduction)**

Ներածությունը պետք է ներկայացնի ուսումնասիրության հիմնախնդիրները, հիմնավորի, ոլորտում տվյալ հետազոտության արդիականությունը և նորույթը, տեսական և գործնական/կիրառական նշանակությունը, հետազոտական մեթոդ(ներ)ը, նախանշի հետազոտության նպատակը և խնդիրները (առավելագույնը 1 էջ):

### **Ենթավերնագրեր**

Հոդվածի տեքստը կարող է ունենալ բաժիններ՝ իրենց ենթավերնագրերով, որոնք ներկայացնում են հետազոտության առանձին դրույթները և խնդիրները:

### **Եզրակացություն**

Եզրակացությունը պետք է ներկայացնի հետազոտության ընդհանրական բնութագիրը, որում հստակ ձևակերպված կլինեն հետազոտության հիմնական եզրահանգում(ներ)ը:

### **Գրականության ցանկ**

Գրականության ցանկում նշված աղբյուրները պետք է արտացոլված լինեն հոդվածում: Գրականության ցանկից հետո **REFERENCES** բաժնում այբբենական կարգով, լատինական տառադարձման տարբերակով (տառադարձման համար կարող եք օգտվել [www.translit.ru](http://www.translit.ru) կայքից) պետք է տալ հոդվածում օգտագործված ոչ լատինատառ գրականությունը, որից հետո փակագծերում (...) նշել բնագրի լեզուն, օրինակ.

Bediryan P. (1973), Jamanakacic hayereni dardzvacabanutyun, Yerevan, p. 213. (In Armenian)

Reichstein A.D. (1980), Sopostavitelni analiz nemeckoi I ruskoi frazeologii, Moskva. (In Russian)

## **Օգտարալեզու ամփոփագրեր**

Հոդվածի լեզվից տարբերվող մյուս երկու լեզուներով ամփոփագրերը զետեղվում են աշխատանքի վերջում՝ 150-ից 250 բառի սահմաններում: Հոդվածի հեղինակ(ներ)ի անուն ազգանուն(ներ)ը, վերնագիրը գլխատառերով, 10 pt տառաչափով և թավ (bold), հիմնաբառերը փոքրատառերով՝ 10 pt տառաչափով և թավ (bold):

## **Հեղինակի մասին տեղեկություն**

Հոդվածի վերջում տրվում է հեղինակի մասին տեղեկություն երեք (հայերեն, անգլերեն և ռուսերեն) լեզուներով, գիտական աստիճանը, գիտական կոչումը, զբաղեցրած պաշտոնը, գիտական կամ ուսումնական կազմակերպության լրիվ անվանումը /ինստիտուտ, համալսարան, ամբիոն, ֆակուլտետ, բաժին և այլն/, էլ. փոստի հասցեն, (հեռախոսահամարը նշել էլ. նամակում՝ հեղինակի հետ հետադարձ կապի պահպանման նպատակով):

### **3. Հոդվածին ներկայացվող տեխնիկական պահանջները.**

- ✓ Հայերեն, ռուսերեն և անգլերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat,
- ✓ հիմնական տառաչափը՝ 10,
- ✓ միջտողային սահմանաչափը՝ 1.15,
- ✓ հոդվածի ծավալը՝ ոչ պակաս, քան 0.5 և ոչ ավել քան 1,0 մամուլ, նվազագույնը 8, առավելագույնը 16 էջ՝ ներառյալ ամփոփագրերը,
- ✓ էջի չափսերը՝ 160x230 մմ,
- ✓ էջի լուսանցքները՝ վերև 2 սմ, ներքև՝ 2,5 սմ, ձախ՝ 2 սմ, աջ՝ 2 սմ /առանց ոճական ձևավորումների/,
- ✓ գրաֆիկների և աղյուսակների լայնությունը՝ մինչև 125 մմ,
- ✓ պարբերության սկիզբը՝ 1 սմ խորքից,
- ✓ բոլոր էջերը պետք է համարակալված լինեն,
- ✓ տեքստում չպետք է լինեն կրկնակի բացատներ և տողադարձեր,
- ✓ աղյուսակները պետք է լինեն համարակալված և վերնագրված, ուղղահայաց դիրքով (Portrait),
- ✓ գծապատկերները, դիագրամները, լուսանկարները պետք է ունենան բարձր որակ և համապատասխանեն տպագրության որակական պահանջներին:
- ✓ Տեքստում հիմնական մտքի, եզրակացության կարևոր եզրույթները շեշտադրելու նպատակով կարող են օգտագործվել տեքստի բառերի և առանձին հատվածների շեշտադրման գործիքներ՝ շեղատառ, թավ տառեր և ընդգծում:

- ✓ Հապավումներն առաջին անգամ կիրառելիս անհրաժեշտ է ներկայացնել բացված (Օրինակ՝ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան (ԲՊՀ)):
- ✓ Դարը գրվում է հռոմեական թվանշաններով: Միավորները գրվում են տառերով (1-9), իսկ հաջորդները (10 և ավելի)՝ արաբական թվանշաններով:

#### **4. Հղման համակարգը**

- ✓ Խորհուրդը առաջնորդվում է հումանիտար և հասարակագիտական ոլորտներում միջազգայնորեն ճանաչված հղումներ կատարելու հարվարդյան APA (American Psychological Association) ձևաչափով (հղման համակարգի ուղեցույցը տե՛ս՝ APA 7 Format Citation Guide, <https://www.mendeley.com/guides/apa-citation-guide> կամ **ներբեռնել այստեղ**), իսկ գրականության ցանկը՝ հետևյալ սկզբունքով՝

#### **Գիրք**

Ջահուկյան Գ. Բ. (2010), Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 819 էջ:

Стернин И. А. (2012). Основы речевого воздействия. Учебное издание. - Воронеж. Истоки - 178 с.

Phillips, D. (2006). Quality of life: concept, policy and practice (3 rd ed.). London: Routledge, 200 p.

#### **Պարբերական**

Աղայան Է. (1952), Որակական անցումները լեզվի մեջ: Տեղեկագիր, ՀՍՍՌ ԳԱ. հաս. գիտ., № 9, էջ 25-46:

Тарасов Е.Ф. (1990). Речевое воздействие как проблема речевого общения (введение)// Речевое воздействие в сфере массовой коммуникации. - Москва. Наука - С. 3-14.

Ahmadyan, A. (2021). Corporate Governance and Iranian Banking Economic Value Added. Iranian Journal of Finance, 5(2), p. 47-69.

#### **Էլեկտրոնային աղբյուրներ**

[http://employment.am/up/attach/attach\\_arm10.pdf](http://employment.am/up/attach/attach_arm10.pdf) (Դիտված՝ 29.09.2016):

<http://www.lib.ru/FILOSOF/HUIZINGA/huizinga.txt> (Просмотрено 29.09.2016).

<https://www.amnesty.org/download/Documents/56000/eur540052008en.pdf> (Accessed 29.09.2016).

- ✓ Ներտեքստային հղումները պետք է համապատասխանեն օգտագործած աղբյուրների և գրականության ցանկին: Ներտեքստային հղումը տրվում է փակագծում (աղբյուրի լեզվով) ու ներառում է հեղինակի ազգանունը և հրապարակման տարեթիվը, առանձին դեպքերում՝ նաև աղբյուրի էջերը: Օրինակ՝

Հայերեն	Ռուսերեն	Անգլերեն
(Աղայան, 1963) (Քյոշկերյան, 1977, էջ 141) (Շնորհալի, 1987, էջ 336-339) (Գաբրիելյան, Նազարյան, 2021, էջ 70-73)	(Сыропятов, 2020) (Мигунов, 2010, с. 21) (Сыропятов, Дзеружинская, 2020, с. 68) (Аванесов, Габриелян, Назарян, Померанцев, 2021, с. 66-71)	(Mitchell, 2016) (Mitchell & Smith, 2017) (Mitchell, 2017, p.104) (Mitchell, Smith & Thomson, 2017) (Mitchell, Smith & Thomson, 2017, p. 100-103)

- ✓ Եթե հեղինակի անունը նախադասության մեջ նշված է, ապա փակագծում նշվում է միայն աղբյուրի տարեթիվը: Օրինակ՝ Հակոբյանը (1980) նշում է, որ ուսումնասիրությունը կատարվել է վաղ միջնադարում:
- ✓ Հոդվածի ծանոթագրությունները և մեկնաբանությունները կարող են նշվել հիմնական տեքստի տողատակին (footnote):